

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 172

Հաւատք եւ գործեր – Եկեղեցու պատմութեան ընթացքում շատեր գործածել են Յակոբոս նամակի երկրորդ գլուխը որպէսզի վիճաբանել միայն հաւատքով արդարացման վարդապետութիւնը՝ ուսուցանելով թէ մեղաւորներ արդարանում են հաւատքով ու բարի գործերով: Յակոբոս 2:24ում Յակոբոսը գրում է թէ՛ «Արդ տեսնում էք որ մարդ գործերով է արդարանում, եւ ոչ միայն հաւատքով», բայց Հռովմայեցիս 3:28ում Պօղոսը գրում է թէ՛ «Ուրեմն համարում ենք, որ մարդը հաւատքով է արդարանում առանց օրէնքի գործերի»: Բացի այդ, երկուսն էլ դիմում են նահապետ Աբրահամին որպէս իրենց գերագոյն օրինակը (Յակոբոս 2:21, Հռովմայեցիս 4:1-3): Ուստի ինչպէ՛ս պիտի հասկանանք եւ հաշտեցնենք Յակոբոսի եւ Պօղոսի հակասական թուող ուսուցումները:

Երբ Պօղոսը խօսում է Աբրահամի արդարացման առթիւ նա ետ է վերադառնում Ծննդոց 15:6՝ ուր իր հաւատքով Աբրահամը սեպեց ուղղարար Աստուծոյ առջեւ: Ուրեմն, երբ Պօղոսը խօսում է արդարացման առթիւ նա պատասխանում է այդ հարցումը թէ՛ «Ինչպէ՛ս է կարող մեղաւոր մարդը արդարանալ մի սուրբ Աստուծոյ առջեւ»: Նա շարունակում է բացատրելով թէ արդարացումը հաստատուած է ոչ մարդու ուղղարարութեան վրայ, այլ մի ուղղարարութեան վրայ որը Աստուծոց է՝ մի ուղղարարութիւն որը առանց օրէնքի կամ առանց գործերի է (Հռովմայեցիս 3:21, 4:6)՝ այսինքն Քրիստոսի ուղղարարութիւնը, որը մեղաւորը իւրացնում է հաւատքով (Գաղատացիս 2:15-16, Փիլիպպեցիս 3:9):

Միւս ձեռքի վրայ, երբ Յակոբոսը խօսում է Աբրահամի արդարացման առթիւ նա ետ է վերադառնում Ծննդոց 22, ասելով որ Աբրահամը գործերով արդարացաւ՝ իր որդի Իսահակին պատարագ մատուցանելով: Գիտենք որ այս եղելութիւնը տեղի ունեցաւ Աստուծոյ Աբրահամին Ուր քաղաքից դուրս կանչելուց (Գործք Առաքելոց 7:2) եւ նրան ուղղարար հռչակելուց (Ծննդոց 15:6) շատ տարիներ յետոյ: Ուրեմն, երբ Յակոբոսը խօսում է արդարացման առթիւ նա պատասխանում է այդ հարցումը թէ՛ «Ինչպէ՛ս ենք կարող իմանալ թէ մէկի հաւատքը իսկական է»: Յակոբոսը ասում է որ Աբրահամը իր գործերով «ուղղարար ցուցադրեց»:

Ուստի, թէպէտ թէ Պօղոսը եւ թէ Յակոբոսը գործածում են նոյն «արդարացաւ» բառը, սակայն նրանք գործածում են այն տարբեր իմաստներով՝ խօսելով երկու բոլորովին տարբեր բաների առթիւ: Եւ նրանց ուսուցումների ենթահողը հաստատում է իւրաքանչիւրի իմաստը: Պօղոսը խօսում է արդարացման առթիւ որպէս Աստուծոյ առջեւ եղած ուղղարարութեան մի դրօշային հռչակում՝ որը միայն հաւատքով է իմանաւ Քրիստոսի ուղղարարութեան վրայ, իսկ Յակոբոսը խօսում է արդարացման առթիւ որպէս մարդկանց առջեւ եղած ուղղարարութեան մի գործնական ցուցադրում՝ որը բարի գործերով է:

Ըստ ենթահող, Պօղոսը վարում էր օրինապաշտների հետ՝ որոնք հաւատում էին որ Աստուծոյ առջեւ ընդունուած էին իրենց օրէնք պահելու հիման վրայ: Մինչ Յակոբոսը վարում էր հակօրինականների հետ՝ որոնք հաւատում էին որ Աստուծոյ առջեւ ընդունուած էին իրենց աւետիսի գիտութեան ու ընդունելութեան հիման վրայ, եւ ուստի կարող էին ապրել ինչպէս որ ուզում էին, մերժելով բարի գործերի հարկաւորութիւնը՝ նոյնիսկ մեղանչելով առանց որեւէ արգելքի: Բայց այդպէս որ բացատրեց անցեալ դասերում, փրկարար հաւատքը բաղկացած է ոչ միայն գիտութիւնից ու ընդունելութիւնից, այլ նաեւ վստահութիւնից: Եւ այսպէս մի հաւատքը կ'պատճառէ մի փոխուած կեանք՝ մի կեանք որը սիրում է Աստուծուն եւ ուրիշներին (Մատթէոս 22:36-40): Աստուածաշունչը չի սովորեցնում արդարացում հաւատքի դաւանանքովը, այն սովորեցնում է արդարացում հաւատքի ունենալովը (Բ. Կորնթացիս 13:5, Բ. Պետրոս 1:3-11):

Յակոբոսը առարկում է դրանց դէմ որոնք դաւանում են որ Քրիստոնէաներ են բայց չունեն որեւէ բարի գործեր (համարներ 14-20): Նա մէկ խօսքով ասում է որ եթէ ասում ես որ հաւատք ունես ապա ցոյց տուր, փաստիր, ներկայացրու այդ իր պտուղով, բարի գործերով (Յովհաննէս 15:8, Յակոբոս 1:22-25): Յակոբոսը ասում է որ նոյնիսկ Սատանան գիտէ եւ ընդունում է որ կայ միայն մէկ Աստուած, բայց նա Աստուծոյ թշնամին է՝ ատելով Նրան ու Նրա ճշմարտութիւնը: Շատեր դաւանում են որ ունեն հաւատք, բայց եթէ չկայ կեանք որը համապատասխան է իրենց դաւանանքին, ապա իրականում նրանք բնաւ հաւատք չունեն: Մատթէոս 7:16-20ում Յիսուսը ասում է որ մի բարի ծառ՝ այսինքն մի փրկուած անձ, բարի պտուղ կ'տայ. եթէ ոչ, այն մի բարի ծառ չի, եւ կ'դատուի (Մատթէոս 3:8-10, Յակոբոս 3:11-12):

Ուրեմն պարզ է որ Յակոբոսն ու Պօղոսը չեն հակասում իրար. իսկ նրանք պատասխանում են երկու տարբեր հարցումներ: Իրականում նրանք համաձայն են իրարու հետ այս երկու նիւթերի նկատմամբ (Յակոբոս 1:17-18, Հռովմայեցիս 6:1-4, Գաղատացիս 5:19-24, Եփեսացիս 2:10): Թէպէտ գործեր չեն վաստակում (ձեռք բերում) մեր արդարացումը, սակայն դրանք անխուսափելիօրէն կ'լինեն մեր արդարացման արդիւնքը: Եթէ բացակայ են բարի գործեր ապա նաեւ բացակայ է հաւատք: Վերակազմ բանաձեւն է թէ՛ «Մենք փրկուած ենք միայն հաւատքով, բայց այդ հաւատքը որը փրկում է երբեք մենակ չի»: Մաթթիո չէրին մեկնաբանում է թէ՛ «Հաւատքը արմատն է, բարի գործերը պտուղներն են, եւ մենք պիտի ստուգենք որ երկուսն էլ ունենք: Մենք չ'պիտի մտածենք թէ որեւէ մէկը, առանցի միւսը, կ'արդարացնի եւ կ'փրկի մեզ» (Ուէստմինստրը Հաւատոյ Հանգանակ, Գլուխ 11 , Բաժին 2):